ՄԼԵՀ ԻՇԽԱՆԱՊԵՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կիլիկիայի հայկական պետության 12-րդ դարի երկրորդ կեսերի արտաքին քաղաքականության պատմությունը առանձնահատուկ է: Մի կողմից Կիլիկիայի հայոց պետության զորեղացմանը դեմ էր Բյուզանդական կայսրությունը, որի տիրապետության տակ էր հայոց իշխանապետությունը, մյուս կողմից էլ Արևելքում ակտիվացել էին խաչակրաց իշխանությունները: Չափազանց բարդ էին նաև Կիլիկիային սահմանակից մահմեդական պետությունների հետ հարաբերությունները, քանզի տարածաշրջանում դեռևս բավական ազդեցիկ էին Իկոնիայի սելջուկյան և հատկապես Եգիպտոսի սուլթանությունները:

Քաղաքական նման խառը պայմաններում 1170 թ. հայոց իշխանապետ դարձավ Մլեհը (1170-1175)[1], որը Ռուբինյան դինաստիայի ականավոր ներկայացուցիչներից էր: Նա առանձնանում էր փորձառու պետական գործչին վայել հատկանիշներով: Իր գործունեության ընթացքում լուրջ ձեռքբերումներ ունեցավ իր երկրի արտաքին քաղաքականության մեջ:

Նշենք, որ միջնադարյան մի շարք պատմիչներ, որոնք մեծամասամբ հոգևորականներ են, բացասական կարծիք են հայտնել Մլեհ իշխանապետի արտաքին քաղաքականության մասին: Մոտավորապես 1165 թ. Մլեհը հավակնություններ էր ունեցել իր եղբոր՝ հայոց իշխանապետ Թորոս Բ-ի իշխանության նկատմամբ, ապստամբել էր նրա դեմ, բայց պարտություն կրել և արտաքսվել երկրից: Մլեհի բարձրացրած ապստամբության պատճառներից մեկը Թորոս Բ-ի արտաքին քաղաքականությանը համաձայն չլինելն էր: Այդ բնագավառում հայոց իշխանապետը խաչակիրների հետ հարաբերություններում զիջումների ճանապարհն էր ընտրել, իսկ Մլեհը, որը այդ ժամանակ հայոց սպարապետն էր նախընտրում էր խաչակիրների դեմ բացահայտ պայքար: Քանի որ նրա առաջարկած քաղաքականությունը չեն ընդունում Թորոս Բ-ն և միգուցե Կիլիկիայի պետության վերնախավի որոշ ներկայացուցիչներ, հեռանում է երկրից:

---

[1] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի», կազմեց Վ. Հակոբյանը, հ. Բ, Եր., 1956, էջ 102-103: Այդ մասին տե՛ս նաև՝ **C. Mutafyan**, The Brilliant Diplomacy of Cilician Armenia, Armenian Cilicia, Edited by R. Hovhannisyan and S. Payaslian, California, 2008, էջ 97, «Հայ ժողովրդի պատմություն», ՀՀ ԳԱԱ հրատ., հ. Գ, Եր., 1976, էջ 683:

Նա ծառայության է մտնում Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի մոտ, որը նրան տիրույթներ է տալիս Հյուսիսային Ասորիքում[2]: Արաբ պատմիչների վկայմամբ՝ Մլեհը ոչ միայն չդարձավ Նուր ադ-Դինի կույր գործիքը, այլև օգտագործեց վերջինիս հնարավորությունները սեփական նպատակներին հասնելու համար: Նշենք, որ Նուր ադ-Դինի հետ Մլեհի համագործակցության մասին հիանալի տողեր ենք գտնում արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի աշխատության մեջ. «Նուր ադ-Դինը այնքան էր սիրաշահում Մլեհին, որ նա որոշեց ծառայության մտնել նրա մոտ և մասնակցել նրա արշավանքներին, օգնել պատերազմում ընդդեմ ֆրանկների: Թերևս նա միակ քրիստոնյա իշխանավորն էր, որ երբևիցե արժանացավ նման պատվի»[3]:

Հայոց իշխանապետի և Նուր ադ-Դինի համագործակցության մասին գրում է նաև 14-րդ դարի արաբ պատմիչ ալ-Զահաբին, համաձայն որի՝ Նուր ադ-Դինը, հիացած այս իշխանի խորամանկությամբ և աննկուն բնավորությամբ, նրա մեջ տեսնում էր մի դաշնակցի ֆրանկների դեմ պայքարում[4]:

Թեև Մլեհի նոր արտաքին քաղաքականությունը ինչ-որ առումով արտառոց էր իր դինաստիայի պատմության մեջ, սակայն բխում էր ժամանակի հայոց պետության շահերից: Մյուս կողմից էլ, ինչպես նշում է Լ. Տեր-Պետրոսյանը, Կիլիկիայի հայ իշխանների գոնե կեսը չէր կարող չհասկանալ հայոց պետության շուրջ ստեղծված միջազգային բարդ իրավիճակը, երբ հատկապես ակտիվացել էին Բյուզանդական կայսրությունը, Իկոնիայի սուլթանությունը, Դանիշմանյան էմիրությունը, Հալեպի սուլթանությունը, Անտիոքի դքսությունը և ուրիշներ[5]: Եվ նրանք լավ էին պատկերացնում, թե ինչպիսի վտանգներ էր պարունակում երկրի կառավարումը մանուկ գահակալի և անտիոքցի օտարազգի խնամակալի ձեռքում թողնելը, մանավանդ որ հայտնի էին Անտիոքի չդադարող նկրտումները Կիլիկիայի հայկական պետության նկատմամբ[6]: Այնուամենայնիվ նոր քաղաքականությունը պսակվեց հաջողությամբ: Փաստ է, որ թեև Մլեհի կառավարման ժամանակաշրջանում Կիլիկիայի հայոց իշխանապետությունը շարունակում էր մնալ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ, սակայն նա արտաքին քաղաքականության գրեթե բոլոր ուղղությունները փոխեց և սկսեց համագործակցել Հալեպի սուլթանության հետ: Դա այդ իրավիճակում ճիշտ և արդարացված որոշում էր:

---

[2] Նուր ադ-Դինը Մլեհին տվեց Կյուրոս քաղաքը ու գավառը, որոնք գտնվում էին Այնթափից հյուսիս-արևմուտք և Կիլիկիայից բաժանված էին միայն Ամանոսյան լեռներով: Այն միաժամանակ Հալեպ-Այաս առևտրական ճանապարհների վրա գտնվող կարևոր բերդերից մեկն էր (տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Սիրիան XII դարի 40-70-ական թվականներին, ՊԲՀ, 1986, № 2, էջ 125):

[3] **Իբն ալ-Ասիր**, Լիակատար պատմություն / Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Եր., 1981, էջ 262-263:

[4] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան,** նշվ. աշխ., էջ 127:

[5] Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Եր., 2007, էջ 142:

[6] Տե՛ս նույն տեղը:

Մլեհը, գալով Կիլիկիա, դադարեց Հալեպի տիրակալի վասալը լինելուց: Նա դարձավ դաշնակից, ինչը շահեկան էր երկու կողմերին էլ: Խնդիրն այն է, որ հայոց իշխանապետը կարող էր զսպել խաչակիրների նկրտումները տարածաշրջանում, որն անշուշտ ձեռնտու էր Հալեպի տիրակալին: Եվ երկրորդ՝ Մլեհը ցանկանում էր վերջինիս օգնությամբ հզորացնել Կիլիկյան Հայաստանը և այնտեղից դուրս քշել ինչպես բյուզանդացիներին, այնպես էլ խաչակիրներին և հասնել բացարձակ անկախության: Այս առումով շատ հետաքրքիր մի տեսակետ է հայտնում նաև Վ. Տեր-Ղևոնդյանը, համաձայն որի՝ Մլեհի իշխանության գալով վերջնականապես խզվեց հայ-խաչակիրներ դաշինքը[7]: Այն, որ նշված ժամանակաշրջանում որոշակի հարաբերություններ կային Կիլիկյան Հայաստանի և խաչակիրների միջև, փաստ է: Սակայն հարց է առաջանում, թե արդյոք խաչակիրները երբևիցե եղել են Կիլիկյան Հայաստանին իրական դաշնակիցներ: Կարծում ենք՝ ոչ, քանի որ պատմությունը ցույց է տալիս, որ նրանք հիմնականում փորձել են օգտագործել Կիլիկիայի հայոց պետության աշխարհագրական հարմար տարածքը և ռազմական ուժերը ծառայեցնել ի շահ իրենց: Չհաշված այն դեպքերը, երբ խաչակիր ասպետների ձեռքով սպանվեցին նաև հայոց իշխանները: Ա. Բոզոյանն էլ ավելացնում է, որ Մլեհը իշխանության եկավ Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինի օգնությամբ և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց Հալեպի աթաբեկությանը[8]: Դրա վկայությունն է հետագա տարիների պատմությունը: Նուր ադ-Դին - Մլեհ դաշինքը անխափան գործեց մինչև նրանց մահը: Թերևս համաձայնենք հեղինակի վերը նշյալ տեսակետին, քանզի Մլեհը դեռևս երիտասարդ տարիներից տեսել էր Բյուզանդական կայսրության թշնամական քաղաքականությունը իր ընտանիքի անդամների հանդեպ և չէր կարող երբևիցե մոռացության տալ այն: Չի բացառվում նաև, որ միգուցե դա էր պատճառը, որ հայոց իշխանապետը չէր հավատում հույներին և նախընտրում էր դաշնակցել Հալեպի սուլթանության հետ:

Մլեհը Կիլիկիայի հայկական պետության պատմության մեջ բացառիկ և յուրօրինակ անձնավորություն էր: Միջնադարի գրեթե բոլոր քրիստոնյա պատմիչները բացասաբար են վերաբերվում նրան և խոսում են ատելությամբ: Մլեհ իշխանապետը բացառիկ էր այն առումով, որ լինելով քրիստոնյա՝ կիլիկյան իրականության մեջ առաջին գործիչն էր, որ քաղաքական և ռազմական այլ մարտավարություն էր որդեգրել: Լատինների մշտական դավաճանությունից և հույների բացահայտ թշնամանքից դասեր քաղելով՝ դաշնակիցներ ընտրելիս կատարեց մի շատ համարձակ, միևնույն ժամանակ վտանգավոր քայլ: Նա ամբողջո-

---

[7] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը XII դարի վերջերին, // ՊԲՀ, 2010, № 1, էջ 124:

[8] Տե՛ս **Ա. Բոզոյան**, Կիլիկիայի բյուզանդական կառավարիչները և Ռուբինյան իշխանությունը XII դարի 40-70-ական թվականներին, // ՊԲՀ, 1984, № 3, էջ 84:

վին փոխեց հայկական պետության արտաքին քաղաքական ընթացքը՝ թեքվելով դեպի մահմեդական աշխարհ: Դա իհարկե չէր կարող դուր գալ քրիստոնյա հոգևորականներին և մի շարք իշխանների, որոնք հակված էին ավելի սերտ կապեր հաստատելու քրիստոնյա պետությունների՝ Բյուզանդական կայսրության, խաչակիրների և քրիստոնյա Արևմուտքի հետ: Ս. Պապիկյանը, խոսելով Մլեհ իշխանապետի մասին, կարծիք է հայտնում, որ նրա արտաքին քաղաքականությունը նախևառաջ հույների դեմ էր[9]: Երիտասարդի մեջ արթնանում է նաև վրեժխնդրությունը, քանզի Մլեհ Ռուբինյանը երիտասարդ տարիներից ականատես էր իր հոր պայքարին Բյուզանդական կայսրության դեմ: Բացի այդ՝ նույն բյուզանդացիների ձեռքով նախ ձերբակալվեցին, ապա սպանվեցին հայրը և մի եղբայրը՝ Ռուբենը, իսկ տարիներ անց՝ նաև Ստեփանեն:

Իր կառավարման հենց սկզբից հայոց իշխանապետը միանձնյա կառավարեց Կիլիկիայի պետությունը և ընդարձակեց նրա սահմանները: Հայոց իշխանապետը Նուր ադ-Դինի հետ մտերմությունը փոխեց բարեկամության: Արաբների, իսկ որոշ դեպքերում էլ թուրքերի հետ դաշնակցությունից զորեղանալով՝ հայոց իշխանապետը շարունակում էր ամուր հաստատված մնալ Լեռնային Կիլիկիայում: Նշենք նաև, որ սա պատմական մի ժամանակաշրջան էր, երբ հայոց պետության հետագա զարգացման համար կենսական նշանակություն ուներ դաշտային և ծովային տարածքներ նվաճելու խնդիրը, ինչը բավական բարդ էր, և հազիվ թե առանց զորեղ դաշնակիցների հնարավոր լիներ իրագործել: Չէ՞ որ այդ տարածքներին հավակնում էին նաև Արևելքում ստեղծված խաչակրաց իշխանությունները և հատկապես Անտիոքի դքսությունը, որոնք մշտապես պայքարի մեջ էին Կիլիկիայի պետության հետ:

Մլեհի իշխանության սկզբում Դաշտային Կիլիկիայի մի քանի շրջաններ դեռևս գտնվում էին խաչակիրների, իսկ արևմտյան որոշ գավառներ՝ Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Եվ երկրի պաշտպանության ու հետագա ամրապնդման համար անհրաժեշտություն էր ծովեզրյա բոլոր շրջանների ազատագրումը: Այդ գործի նախաձեռնողը դարձավ հայոց իշխանապետ Մլեհը: Վերջինս տիրեց որոշ ծովային նավահանգիստների՝ Կիլիկիայի հայոց պետության հսկողության տակ դնելով Արևելք-Արևմուտք առևտրային ճանապարհները: Սա նպաստեց տնտեսական առաջընթացին, որն էլ իր հերթին զարգացրեց քաղաքական, ռազմական, մշակութային և իրավական համակարգերը:

Իր իշխանության տարիներին հայոց իշխանապետը արտաքին քաղաքականության բնագավառում վարում էր բացահայտ հակաբյուզանդական և հակալատին քաղաքականություն: Ընդհանրապես նրա նպատակն է եղել Հայկական Կիլիկիայի բացարձակ անկախությունը:

---

[9] Տե՛ս **Ս. Պապիկյան**, Հայերը և խաչակիրները // Հանդէս Ամսօրեայ, Վիէննա, 1965, № 4-6, էջ 272:

Այդ հարցում Մլեհը հենվում էր ոչ միայն Հալեպի սուլթանության, այլև որոշ դեպքերում մահմեդական այլ պետությունների վրա՝ նրանց հետ ռազմական դաշինքի մեջ մտնելով: Հայոց իշխանապետի դաշնակցությունը մահմեդական աշխարհի հետ անհանգստացրեց Կիլիկիայի քրիստոնյա հարևաններին, մասնավորապես Անտիոքի դքսությանը, խաչակիրներին և Բյուզանդական կայսրությանը, որոնք սահմանակից էին Կիլիկիայի հայկական պետությանը:

Մեզ հայտնի առաջին նման դաշինքը կնքվեց դեռևս 1171 թ.[10], երբ Կիլիկյան Հայաստանը, բացի Հալեպի սուլթանությունից, դաշնակցեց նաև Իկոնիայի սուլթանության և Դանշիմանյան ամիրայության հետ՝ ընդդեմ բյուզանդացիների: Բնականաբար, նման պետությունների հետ դաշնակցությունը Կիլիկիայի հայկական պետությանը բավականին կհզորացներ և նախադրյալներ կստեղծեր տարածքների ընդլայնման, իսկ հետագայում նույնիսկ ավելի մեծ գործերի համար: Նման արտաքին քաղաքականությունը ամբողջովին բխում էր հայոց իշխանապետության շահերից, և էական չէ, թե Կիլիկիայի պետության դաշնակիցը որ դավանանքի ներկայացուցիչ էր: Պատմությունից մեզ բազում օրինակներ են հայտնի, որ քրիստոնյա շատ երկրների միապետներ ևս՝ Անտիոքի տիրակալները, Կիպրոսի և Երուսաղեմի արքաները, հարկ եղած դեպում համագործակցել են մահմեդական պետությունների հետ՝ հանուն իրենց երկրների շահերի:

Եվ այդ կարևոր հանգամանքը ժամանակին առաջինը գիտակցեց Կիլիկիայի տաղանդավոր դիվանագետը՝ Մլեհը:

Հովհան Կինամոսը նշում է, որ հայոց իշխանապետի դաշինքը Հալեպի տիրակալի հետ բացասական հետևանքներ ունեցավ Արևելքում, հատկապես Բյուզանդական կայսրության համար: 1171 թ. վենետիկցիների ունեցվածքի բռնագրավումը նկարագրելով՝ նա շարունակում է. « Սրա հետ միաժամանակ բարդացան գործերը Կիլիկիայում, որտեղ Թորոսի մահից հետո իշխանությունը անցել էր նրա եղբայր Մլեհին, որն սկսեց հոռոմներին ոչ պակաս վնաս հասցնել, քան Թորոսը»[11]: Իսկ ահա Անանուն Եդեսացին վկայում է, որ Մլեհը իր ամբարշտությամբ գերազանցեց ոչ միայն քրիստոնյա անօրեն իշխաններին, այլև նույնիսկ մահմեդական և հեթանոս բռնակալներին[12]: Նշենք, որ հույները վերջնականապես կորցրին իրենց երկիրը հետ գրավելու հույսը: Կիլիկյան Հայաստանը, դաշնակցելով Հալեպի սուլթանության հետ, վերացրեց Կիլիկիայի հայոց պետության վասալական կախումը բյուզանդացիներից:

---

[10] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական պետությունները 1145-1226 թվականներին, Եր., 1994, էջ 62:

[11] **Գ. Միքայելյան,** Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, էջ 130:

[12] Տե՛ս **Անանուն Եդեսացի**, Ժամանակագրություն, ասորական աղբյուրներ, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Եր., 1982, էջ 135:

Փաստենք, որ հայոց իշխանապետության համագործակցությունը մահմեդական պետությունների հետ ամբողջովին արդարացված էր և ապահով էր դարձնում Ռուբինյան իշխանության սահմանները, միևնույն ժամանակ հզոր հենարան էր Բյուզանդիայի և Կիլիկիայի պետության մյուս թշնամիների դեմ պայքարում:

Այսպես, սկսած 1170-ական թվականների սկզբներից, Մլեհը սկսում է հարձակողական գործողություններ ձեռնարկել տարբեր ուղղություններով: 1171 թվականին նա գրավում է Գաստոնի ամրոցը, որն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն[13]: Զարգացնելով իր հաջողությունները՝ հայոց իշխանապետը գրավում է նաև Կաստիմ ամրոցը[14]:

Մլեհի հաջողություններից խիստ անհանգստացած՝ Բյուզանդական կայսրությունը փորձեց կասեցնել հայկական պետության առաջխաղացումը, սակայն հայոց իշխանապետը 1173 թ. հունվարին վճռական հաղթանակ տարավ բյուզանդական զորավարների՝ Միքայել Վռանասի, Կոստանդին Եվփոպեի, Կոստանտին Կալոմանի և այլ ճանաչված զորավարների նկատմամբ և ազատագրեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը, որը բյուզանդական գերիշխանության տակ էր սկսած 1158 թ.: Դրանից հետո Մլեհը ձերբակալեց Կոստանդին Կալոմանին և այլ բարձրաստիճան գերիների հետ ուղարկեց Նուր ադ-Դինի մոտ: Հայոց իշխանապետին հաջողվեց գրավել նաև Ադանա, Մամեստիա, Տարսոն քաղաքները, որոնց միացումով Կիլիկիայի հայկական պետությունը ավելի հզորացավ: Պատմիչ Իբն ալ-Ասիրը նշում է, որ Բյուզանդիայի կայսրը, տեղեկանալով Մլեհի հարձակողական գործողությունների մասին, մի մեծ բանակ ուղարկեց նրա դեմ, սակայն ջախջախիչ պարտություն կրեց[15]: Այս հաղթանակներից հետո Բյուզանդական կայսրությունը Ռուբինյաններին զիջեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը, որը մեծ հաջողություն էր հայկական պետության համար: Եվ իրոք. Կիլիկյան Հայաստանի նկատմամբ հավակնություններից Բյուզանդիայի հրաժարվելը թվագրվում է հենց Մլեհի իշխանապետության շրջանով: Վիլհելմ Տյուրացին նշում է. «Կիլիկյան Հայաստանը, որ մինչ այդ մարտկոց էր ֆրանկների համար, շրջվում է վերջիններիս դեմ: Եվ Մլեհը, քրիստոնյա լինելով հանդերձ, մեծ ատելություն էր տածում մեր հավատակիցների հանդեպ: Եվ երբ մարտի ժամանակ բերդում հաջողվում էր նրանց գերի վերցնել, շատ դաժանորեն էր նրանց հետ վարվում, հաճախ ուղարկում էր հեթանոսների երկիր՝ մուսուլմաններին վաճառելու: Եվ այս աստիճան ներքաշված լինելով թուրքական քաղաքականության մեջ՝ հասկանալի է, որ Մլեհը թշնամաբար էր տրամադրված նաև բյուզանդացիների նկատմամբ, որոնցից նա ձգտում էր խլել Դաշտային Կիլիկիայի մեծ քաղաքները»[16]: Մյուս կողմից էլ, ան-

---

[13] Տե՛ս **Մ. Ճևահիրճյան**, Կիլիկյան Գաստոն բնակավայրը, // ՊԲՀ, 1975, № 4, էջ 144:

[14] **Ս. Բռոնազյան**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դդ, Եր., 1973, էջ 153:

[15] **Իբն ալ-Ասիր**, էջ 263:

[16] **Guillaume de Tyr,** Histoire des Croisades, t.18, Paris, 1824, p. 291.

շուշտ, Մլեհի գրաված դիրքը և արտաքին քաղաքականությունը խաչակիրները գնահատեցին որպես դավաճանություն: Եվ հավանաբար դա էր պատճառը, որ Երուսաղեմի թագավորը, Անտիոքի դուքսը և Բյուզանդական կայսրությունը, որոնք դաշնակից էին, որոշեցին պատժել հայոց տիրակալին, սակայն նրանց ջանքերը ապարդյուն անցան:

Վիլհելմ Տյուրացին, անդրադառնալով Կիլիկիայի և Երուսաղեմի թագավորության միջև հարաբերություններին, նշում է, որ Ամալրիկ թագավորը մի քանի անգամ դեսպանություն ուղարկեց Կիլիկիա՝ առաջարկելով Մլեհին հանդիպել և հաշտություն կնքել, բայց հայոց իշխանապետը նրան ընդառաջ չգնաց[17]: Մլեհը կասկածում էր, որ Երուսաղեմի Ամալրիկ թագավորը կարող էր իր դեմ ծուղակ պատրաստել: Ս. Պապիկյանը, անդրադառնալով այս միջադեպին, կարծիք է հայտնում, որ Մլեհը չգնաց, քանզի արդեն պարտավորվածություն չուներ գնալու, քանի որ Հայկական Կիլիկիան արդեն անկախ էր և ոչ մի թագավորի վեհապետությունը չէր ճանաչում[18]:

Այսպես, 1173 թ. իշխան Բոհեմոնդ Գ-ի խնդրանքով Երուսաղեմի թագավոր Ամարլիկը արշավանք ձեռնարկեց Կիլիկիայի դեմ՝ նպատակ ունենալով պատժել հայոց իշխանապետին: Հայկական աղբյուրները վերը նված արշավանքի մասին լռում են: Այդ մասին հաղորդումներ են տալիս Վիլհելմ Տյուրացին և Աբուլ Ֆարաջը, սակայն նրանք արշավանքը սկսելու վերաբերյալ տարբեր թվականներ են նշում: Վիլհելմ Տյուրացին արշավանքը թվագրում է 1173 թվականով[19], իսկ Աբուլ Ֆարաջը՝ 1170-ով[20]: Կարծում ենք՝ առավել հավանական կարող է լինել 1173 թվականի տարբերակը, քանի որ 1170 թվականին Մլեհը նոր էր անցել իշխանության և պայքար էր մղում իր իշխանությունը ամրապնդելու համար, իսկ 1173 թվականը պատմական այն ժամանակաշրջանն էր, երբ Մլեհ Ռուբինյանը գտնվում էր իր փառքի գագաթնակետին, բավական տարածքներ էր նվաճել թե՛ Բյուզանդական կայսրությունից և թե՛ խաչակիրներից: Եվ շատ բնական է, որ խաչակիրներին այս շրջանում կարող էր մտահոգել այն, որ առջևում կարող են նոր խնդիրներ ունենալ, ուստի և փորձեցին արշավել Կիլիկյան Հայաստան և կանգնեցնել Մլեհի առաջխաղացումը:

Այսպես, շրջանցելով դժվարամատչելի լեռնային շրջանները, թշնամու բանակը առաջացավ դաշտավայրերով՝ ավերելով գյուղերը: Մինչ Մլեհը իր զորքերով ամրացել էր լեռնային շրջաններում, Նուր ադ-Դինը՝ որպես Մլեհի դաշնակից, ռազմարշավ կազմակերպեց և ստիպեց Երուսաղեմի արքային ընդհատել արշավանքը[21]: Պապիկյանի կարծիքով, Նուր ադ-Դինը նման քայլ կատարեց, քանի որ Մլեհից մեծ շահ ու-

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 276:
[18] Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 274:
[19] Տե՛ս **Guillaume de Tyr**, էջ 291:
[20] Տե՛ս «The Chronography of Gregory Abul Faraj (Bar Habraeus)», London, 1932, էջ 298:
[21] Տե՛ս նույն տեղը:

ներ[22]: Ինչ վերաբերում է Անտիոքի դքսությանը, ապա այն ևս որոշակի քայլեր փորձեց ձեռնարկել, սակայն որևէ հաջողություն չունեցավ Կիլիկիայի հայոց պետության դեմ պայքարում:

Փաստորեն Մլեհ-Նուր ադ-Դին դաշնակցությունը կարողանում էր հաջողությամբ դիմագրավել հակակիլիկյան կոալիցիայի երկրներին:

Մլեհը բախվեց նաև Կիլիկիայում հաստատված տաճարական ասպետների հետ և խլեց նրանց ունեցվածքն ու պետականացրեց: Ըստ Մ. Ա. Շնալիեի՝ Մլեհը ժամանակին տաճարական է եղել[23]:

Մեզ քիչ փաստեր են հասել Մլեհ Ռուբինյանի եկեղեցական քաղաքականության մասին: Հայտնի է, որ 12-րդ դարի 60-70-ական թթ. հայ-բյուզանդական եկեղեցական միության վերաբերյալ բանակցություններում կաթողիկոս Ներսես Շնորհալին բարդ դիվանագիտական պայքարում կարողացավ պաշտպանել հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու անկախությունը բյուզանդականից: Այդ առումով հայոց եկեղեցու ղեկավարությունը նույնպես դաշնակցեց Մլեհ իշխանապետին:

Այսպիսով, նշյալ շրջանում Կիլիկիայի ոչ միայն քաղաքական իշխանությունը, այլև հոգևոր հայրերը դեմ էին Բյուզանդիայի հետ դաշնակցությանը: Միգուցե այդ պահին շատերն էին հասկանում, որ Բյուզանդիան այն ուժը չէր, որի հետ կիլիկյան պետությունը կարող էր կապել իր ապագան: Մյուս կողմից էլ Մլեհը միջամտեց կաթողիկոսական ընտրությանը: Ինչպես գիտենք, Ամենայն հայոց կաթողիկոսարանը գտնվում էր Եփրատ գետի ափին՝ Հռոմկլա բերդաքաղաքում, որը Եգիպտոսի սուլթանության տարածքն էր: 1173 թ.՝ Ներսես Շնորհալու մահից հետո, հայրապետական աթոռին բազմեց Գրիգոր Ապիրատը, սակայն Մլեհը գնաց Նուր ադ-Դինի մոտ, համաձայնեցրեց նրա հետ իր գործողությունները, զորքով արշավեց Հռոմկլա, գրավեց այն, գահընկեց արեց կաթողիկոսին: Նրա կամքով հայոց հայրապետական աթոռին բազմեց Գրիգոր Դ Տղան[24]: Ինչպես նկատում ենք, Մլեհի հեղինակությունը այնքան էր մեծացել, որ նա կարողացավ Կիլիկիայի սահմաններից դուրս լուծել այդ խնդիրը:

Մլեհի իշխանապետության՝ իրադարձություններով ու հաղթանակներով հարուստ տարիները կարելի է համարել 1172-1173 թթ., երբ նա պատերազմներ վարեց Բյուզանդական կայսրության, խաչակրաց պետությունների և Արևելքում հաստատված մի շարք այլ ուժերի դեմ:

Մլեհի դաշինքը Հալեպի սուլթանության հետ դրսևորվեց նաև մի շարք այլ տեղերում: Հայոց իշխանապետը ակտիվորեն միջամտեց Դանիշմանյանների պետության գահակալական ներքին կռիվներին՝ ռազմական ճանապարհով լուծելով դրանք Հալեպի սուլթանի ցանկալի

---

[22] Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 274-275:

[23] Տե՛ս **Մ. Ա. Շնալիե**, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Եր., 2007, էջ 11:

[24] Տե՛ս **Միքայել Ասորի**, Ժամանակագրութիւն հայոց, Երուսաղէմ, 1871, էջ 472:

թեկնածուի օգտին: Այս փաստը ևս վկայում է, որ հայոց իշխանապետի ազդեցությունը դուրս էր եկել Կիլիկիայի պետության սահմաններից:

Հայոց իշխանապետի համագործակցությունը Հալեպի սուլթանության հետ չի սահմանափակվել միայն ռազմական դաշինքով: Տեղեկություն կա նաև, որ Մլեհը Հալեպի սուլթան Նուր ադ-Դինի հետ դրամ է կտրել, ինչն անշուշտ նպաստելու էր առևտրատնտեսական երկկողմ գործունեությանը: Ժամանակակից հետազոտողներից Ս. Պապիկյանը Մլեհի արտաքին քաղաքականությունը համարում է կարճատես, որը ազգին դեպի կործանում էր տանում[25], սակայն գիտնականների մեծ մասը հայոց իշխանապետի քայլերը ճիշտ է համարում[26]: Թեև Մլեհ իշխանապետի հաջորդներից և ոչ մեկը չէր վարում նման ընդգծված հակալատին և հակաբյուզանդական քաղաքականություն, սակայն Կիլիկիայի գրեթե բոլոր հայ իշխանապետերն ու արքաները ձգտում էին ազատվել խաչակիրների և բյուզանդացիների կեղծ բարեկամությունից:

Հետազոտող Ս. Առաքելյանը նշում է, որ Մլեհի հաղթանակների շնորհիվ Կիլիկիայի հայկական պետության մեջ մտան նավահանգստային խոշոր քաղաքներ: Նա ելք ունեցավ դեպի ծով, ինչը նշանակում էր, որ ծովային առևտրից մաքսատուրքը անցնելու էր հայկական իշխանապետությանը՝ նպաստելով նրա տնտեսական հզորությանը: Եվ նրա ճիշտ արտաքին քաղաքականության շնորհիվ Կիլիկիայի հայկական իշխանապետությունը վերածվեց ծովային պետության[27]:

Հալեպի սուլթան Նուր ադ-Դինը մահացավ 1174 թ. մայիսին, որից հետո Կիլիկիայի հայոց իշխանապետությունը զրկվեց ուժեղ դաշնակցից: Նուր ադ-Դինի մահից հետո Մլեհը կառավարեց մոտավորապես մեկ տարի: Սակայն միջնադարյան պատմիչների երկերում չեն պահպանվել տեղեկություններ այն մասին, թե արդյոք եղել են որոշակի հարաբերություններ Մլեհ Ռուբինյանի և Նուր ադ-Դինի հաջորդների միջև:

Ի վերջո՝ մահմեդական պետությունների հետ դաշնակցելը, ներքին խիստ քաղաքականությունը Մլեհի դեմ տրամադրեցին Կիլիկիայի ավատատերերի մի մասին, հոգևորականությանը և, իհարկե, որոշ արտաքին ուժերի:

1175 թ. վերջին Սիս քաղաքում կազմակերպվեց մի դավադրություն, որի ժամանակ սպանվեց հայոց իշխանապետը[28]: Անժխտելի է, որ Մլեհի սպանության հիմնական պատճառը նրա վարած արտաքին քաղաքականությունն էր: Դրա վկայությունն է այն, որ Մլեհի սպանությա-

---

[25] Տե՛ս **Ս. Պապիկյան**, նշվ. աշխ., էջ 273:

[26] Տե՛ս **Վ. Տեր-Ղևոնդյան**, նշվ. աշխ., էջ 71, **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 130, **Կ. Մութաֆյան**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001, էջ 394-395:

[27] Տե՛ս **Ս. Առաքելյան**, Մլեհի թագավոր դառնալու հնարավորության հարցը և դրա ձախողման դրդապատճառները // Ակունք, Իջևան, 2011, № 1, էջ 7:

[28] Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցիոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 138, «Վահրամայ Ռաբունւոյ ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանցն», Փարիզ, 1859, էջ 211:

նը մասնակցեցին նաև բյուզանդացիները, և նա սպանվեց հույն զինվորի ձեռքով:

Կարևոր է ընդգծել մեկ փաստ ևս, որ թեև Մլեհը սպանվեց, սակայն նա պատմության մեջ մնաց որպես ուժեղ և խելացի դիվանագետ: Ըստ ժամանակակից հետազոտողներից Ե. Քասունու՝ Մլեհ Ռուբինյանը կմնա Կիլիկիայի հայկական իշխանապետության ամենահանդուգն քաղաքագետներից մեկը[29]:

Բանալի բառեր – *Կիլիկիա, պետություն, Մլեհ, արտաքին քաղաքականություն, իշխանապետություն, Նուր ադ-Դին, դաշնակցություն, Անտիոք, համագործակցել, պետություն, Եգիպտոսի սուլթանություն, պատմիչ*

АРАМ ОГАННИСЯН – *Из истории внешней политики князя Млеха.* – Млех Рубинян – выдающийся деятель Киликийской Армении. Статья посвящена тому, как Киликийское государство впервые вступило в непосредственный контакт с мусульманским миром. Речь идёт о военно-политических соглашениях, заключённых Млехом на Ближнем Востоке, и преимуществах, обретённых армянским государством в новой политической обстановке. В статье, кроме того, затронут вопрос о завоевательной политике князя Млеха, захвату полевой и морской Киликии, осуществлённому в союзе с султанатом Алеппо. Рассматрена также история убийства Млеха в связи с его внешней политикой.

Ключевые слова: *Киликия, страна, Млех, внешняя политика, княжество, Нур ад-Дин, союз, Антиохия, сотрудничал, Египетский султанат, историк*

ARAM HOVHANNISYAN – ***From the History of the Foreign Policy of the Prince Mleh***. – The work is dedicated to the study of the renowned politician – Mleh Rubinyan's foreign policy. Based on the study of the medieval and contemporary academic literature, the article describes the process when the Armenian prince managed to bring about a change in the Armenian direction of foreign policy, taking a pro-Muslim line. The article highlights all the alliances made by the Armenian prince in the Middle East and the achievements that Cilician Armenia recorded in the new political reality. Some reference was made to Prince Mleh's conquering policy namely, land and sea conquest of Cilicia that had been realized through the alliance with the sultanate of Aleppo. The article also dwells upon Mleh's assassination, emphasizing that the main reason for this was the Prince's foreign policy.

Key wards: *Cilicia, Mleh, forein policy, principality, Nur ad-Din, alliance, Antioch, cooperate, state, Egypt sultanate, historian*

Ներկայացվել է՝ 13.01.2020
Գրախոսվել է՝ 24.01.2020
Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020

[29] Տե՛ս **Ե. Քասունի**, Ռուբէն Գ իշխանապետ (1175-1187), Պէյրութ, 1987, էջ 16: